

24593

C. 1930/810

ԱԶՐԵՉՍՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ա ԵՎ Կ Ի Զ Ի Ո Ւ
Կ Ո Մ Ի Ս Ի Ա Ն Ե Ր



Ա Զ Կ Ե Ն Տ Գ Ո Ր Ծ Կ Ո Մ Ի
Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Զ Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ն Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Բագր—1929թ.

331.88

Դ-37

15 JAN 2010 1930/81

1581

31.88

1581

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

АТУРУЛІНН
АНДЫЛМАСЫ
ЖЕҢІКІЛІК
СОМА

ԴԱՅՐԱ-ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻՆ

ՅԵՎ

ԳՅՈՒՂԻՍՈՐՀՐԴՆԵՐԻՆ ԿԻՑ ՈԵՎԻԶԻՈՆ
ԿՈՄԻՍԻԱՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԶԵՐՆԱՐԿ

ԴԱՅՐԱ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈԵՎԻԶԻՈՆ
ԿՈՄԻՍԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ



18.02.2014

24593

АСТРАХАНСКИЙ
ОБЛАСТИЧЕСКИЙ
КОММУНИСТИЧЕСКИЙ
ПОРЯДОК

Типография
„III-й Интернационал“
Бакполиграфтреста, ВСНХ
Баку, ул. Саратовца Ефимова, 37.
Заказ № 226
Главлит № 3653. Тираж 2000.



60118-67

Դալրա - գործկոմների պրեզի-
դիումներին, դալրա ռեվիզիոն
կոմիսիաներին, գյուղխորհրդնե-
րին և գյուղական բեկիզիոն
կոմիսիաներին ի դեկավարու-
թիուն:

Ոկրուգալին վարչական սիստեմին անցնելու հետևանքով
մեծացրած դալրագործկոմների և գյուղխորհրդների տնտեսա-ֆի-
նանսական բազան (հիմքը) ընդլայնել է: Սրա հետ միասին ընդ-
լայնել և նույնպես և դալրա-գործկոմների ու գյուղխորհրդների
իրավունքների և պարտականությունների շրջանակները՝ ընակ-
չության կուտուր-անտեսական հարցերում սպասարկելու (օԵլու-
յացման) տեսակետից:

Սրանից բղիում է խոշոր նշանակություն ունեցող մի խըն-
դիք. սահմանել իրական հասարակական կոնտրոլ (վերահսկում)
նրանց տնտեսական-ֆինանսական գործունեության վրա՝ միա-
ժամանակ ընտրված դալրաների, դալրա-խորհրդների և գյու-
ղական ռեվիզիոն (վերաստուգիչ) հանձնաժողովների միջոցով:

Ռեվիզիոն հանձնաժողովների կանոնագրությունը նրանց
անդամների վրա մեծ պարտականություններ և դնում. — ստուգել
այն բոլոր հիմնարկների տնտեսա-ֆինանսական գործունեյու-
թյունը, գործնք պահպան են գյուղխորհրդների բյուջեյով՝ դալ-
րագործկոմի, հողագին ընկերությունների, ապահովագրության
մարմինների և այլն: Այս բոլորը կարեն և մանավանդ այն
պատճառով, վոր ներկա պայմաններում խիստ տնտեսումն, սաաց-
վելիք բոլոր գումարների բացիոնալ ռայակացործումն, բյուջեի
դիսցիլինալին, հետևելն ու դասակարգալին հստակ գծի անցկա-
ցնելն և չքավորների, բաժրակների ու անհջակների շահերի ապա-
հովումն ստանում են բացառիկ պարկող նշանակություն:

Հողագին ընկերությունների վեցամյամանակական կոնտրոլ
սահմանելը ունի շատ մեծ նշանակություն. Վորովինեան
հողալին ընկերությունները ունենում են խոշոր միջոցներ,
վորպիսիք լերբեմն ծախսվում են վոչ ըստ նշանակման, յուրա-
ցնվում են և այն: Նույնը պետք է ասել նաև ինքնատուրքա-
գործան, ապահովագրության մուծումների և այլ միջոցների նը-
կատմամբ:

Այդ բոլոր խնդիրները, վորոնք տրվում են ռեվիզիոն հանձ-
նաժողովի վրա, հաջողությամբ կարելի է իրավործել այն ժամա-

նակ, յերբ իրական կապ կստեղծվի ուելիզիոն հանձնաժողովի և ընտրողների միջև. յերբ հանձնաժողովի ամեն մի անդամ ակտիվ մասնակցություն կունենա աշխատանքի մեջ. յերբ կոնտրոլի հարցերն ամրողությամբ կդառնան հանձնաժողովների կոլեկտիվ գործը:

Ժշտորեն մոտենալ այս կամ այն ձեռնարկութներին հսարակոր կլինի միայն այն գեպքում, յերբ սեվիզիոն հանձնաժողովը տեղակ կլինի գալրագործկոմի կամ գուղլորհրդի և նրանց տերրիտորիայի վրա գտնվող հիմնարկների աշխատանքներին. Այդ իսկ պատճառով սեվիզիոն հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ և հաճախել գալրագործկոմների և գլուղխորհուրդների ու նրանց սելցիաների բոլոր նիստերը:

Հրատարակելով այս ձեռնարկը, Ազգենտգործկոմի կազմաթիմը և Ֆինժողկոմատը նպատակ են ունեցել սեվիզիոն հանձնաժողովի անդամներին տալ անհրաժեշտ գործնական ձեռնարկ իրենց առորյա աշխատանքների համար:

Ա. Ա. Խ. Հ. Ֆ. Կ. ՊԵՏՅԻՆԿՈՆՏՐՈԼ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱԶԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺԻՆ

ՊԵՏՐԱ-ՎՈՐԾԿՈՄՆԵՐԻՆ ԿԻՑ ՈԵՎԻ- ԶԻՌՆ (ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈ- ՎՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխատավոր լայն մասսաների կողմից իրական կոնտրոլ (վերահսկողություն) կենսագործելու և գալրա-բլուզեների կատարումն ու անդամական միջոցների կանոնավոր, նպատակահարմար և տնտեսորեն ոգտագործումը ապահովելու նպատակով՝ գալրագործկոմներին կից հաստատվում են սեվիզիոն հանձնաժողովներ հետևյալ հիմունքներով.

1) Ուելիզիոն հանձնաժողովները ընտրվում են գալրա-խորհըրդների համագումարներում. հանձնաժողովի կազմի մեջ մտնում են 3 հոգի և յերկու թեկնածու՝ մինչ հաջորդ համագումար հրավիրելու ժամկետը. Այդ հանձնաժողովներն աշխատում են ոկրուգործկոմների ընդհանուր հսկողության տակ: Ուելիզիոն հանձնաժողովների անդամները և նրանց թեկնածուները կարող են ընտրվել՝ ինչպես գալրա-խորհըրդների անդամներից, նույնապես և ուրիշ քաղաքացիներ, վորոնք գալրա-խորհըրդների անդամ չեն հանդիսանում, բայց ընտրվելու իրավունք ունեն՝ համաձայն գոյություն ունեցող որենքի:

2. Ուելիզիոն հանձնաժողովների անդամներ չեն կարող լինել՝

ա) Դաշտակործկոմների անդամները և թեկնածուները.

բ) Ճնողները, ամուսինները, յեղացրները, քույրերը, վորդիները և աղջեկները, նույնապես և յեղացրները, քույրերը, ճնողները և գալրա-գործկոմների անդամների ամուսինների զավակները.

շ) Դաշտակործկոմների տեխնիկական աշխատակիցները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Դաշտա-գործկոմների անդամները և թեկնածուները և այն անձինք, վորոնք դաշտա-գործկոմնում պատասխանատու պաշտոն ունեն սեվիզիոն հանձնաժողովների անդամ կընտրվեն՝ գալրա-գործկոմների ամուսինների զավակները. Կամ թե դաշտայում պատասխանատու պաշտոնը թողնելուց հետո՝

3. Ոեվիզիոն հանձնաժողովը իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Առանձին աշխատանքային ապահարատ ու վիզիոն հանձնաժողովը չի ունենում և անհրաժեշտության դեպքերում ոգտվում է դարձագործկոմի ապահարատից:

4. Ոեվիզիոն հանձնաժողովները իրենց վրա դրված խընդիրները իրականացնելու համար—պարզում են, թե վհրաքան ճիշտ և ոգտագործված տեղական բյուջեն և վհրաքան կատարած գործարքները համապատասխանում են հաստատված բյուջեի դիսցիլինային և դիրեկտիվներին, վորոնք տրվում են դարձագործկոմներին—խորհուրդների համագումարների կողմից և այն: Գնահատման են յենթարկում նպատակահարմարության և շահավետության տեսակետից կատարած տնտեսական գործարքները (օպերացիա), ստուգում են, ինչ դրության մեջ և գտնվում դարձողի տրամադրության տակ գտնվող մատերիալները և դրամական միջոցները:

5) Ոեվիզիոն հանձնաժողովները իրավունք ունեն՝ ա) ստուգել դարձագործկոմի հսկողության տակ գտնվող դրամական միջոցները, մատերիալները և գույքը, նույնապես նրա կատարած շինարարական, մթերման և այլ տնտեսական գործարքները. բ) գործուղել հանձնաժողովների անդամներին դարձագործկոմի հսկողության տակ գտնվող հիմնարկները և ձեռնարկությունները քննելու և փաստաթղթերից անհրաժեշտ տեղեկանքները, վերցնելու համար. գ) ստուգել տեղական բյուջեին վերաբերող բոլոր մատկանները, հաշիվները, փաստաթղթերը և դարձագործկոմների ու նրանց յենթակա հիմնարկների ու ձեռնարկությունների գործերը և այն. դ) անհրաժեշտության դեպքում հրավիրել համապատասխան գործկոմի ֆինանսահարկացին մասի վարիչին, փորը հաշվետվություն և կազմել նույնապես և ուրիշ հաշվետու անձանց, ուեվիզիալի ժամանակ այս կամ այն հարցը պարզաբանելու համար. լի) վերստուգել ապահովագրող աշենտի (գործակալի) աշխատանքները—ապահովագրության մուծումները հավաքելու, ազգաբնակչության վորոշ արտոնություններ տալու և ապահովագրման ներդրման կամ աշխատանքները (պարտքերը) տալու վերաբերյալ հետևանքների մասին հայտնելով դարձագործկոմին և պետական ապահովագրության Ազգոնստորին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ուեվիզիոն հանձնաժողովը աշխատանքների հատեղական աշխատակիցներից վերստուգելու դեպքում իրեն ոգնելու համար՝ ներին, գյուղատնտեսներին, հաշվապահներին և այլ:

6. Հերթական ոեվիզիաները դարձագործկոմն հանձնաժողովները կատարում են տարեկան յերկու անգամից վոչ պակաս: Պողոս կարգ ու ուղարկաները կարող են կատարվել ինչպես Արտակարգ ուղարկաները կարող են կատարվել ինչպես գալությամբ ձեռներեցությամբ (ինիցիատիվով), նույնպես և վերադարձությամբ:

7. Դարձագործկոմները պարտավոր են ոեվիզիոն հանձնաժողովներին լրիվ հսկավորություն տալ՝ հետազոտելու տեղական միջոցների ոգտագործման ճշտությունը և նպատակահարմարությունը, ինչպես և անձամբ քննելու հիմնարկների մատերիալները և նրանց հսկողության տակ գտնվող գույքը, նույնպես և դարձությունով պահպան բոլոր հիմնարկների հաշվետարությունը և հաշվետվությունը:

8. Ուեվիզիոն հանձնաժողովները իրենց գործունելության ըրտունում, ոկրուգալին գործադիր կոմիտեի հանձնարարությամբ, կարող են հետազոտել այն հիմնարկները և ձեռնարկությունները, ուղղությունով կատարվող շինարարական, մթերման և այլ տնտեսաբյուջենով կատարվող շինարարական, մթերման և այլ տնտեսական գործարքները: Ուեվիզիոն հանձնաժողովները իրենց նկատառությունները ծախսերի և գործարքների նպատակահարմարության կամ անշահավետության վերաբերյալ հայտնում են դարձագործկոմներին:

Դարձագործկոմների վորոշումը համապատասխան մատերիալով ներկայացնում են այն ուղղուգալին գործադիր կոմիտեին, վորի հանձնարարությամբ կատարված ե յեղել ուղարկան:

9. Դարձագործկոմներին յենթակա հիմնարկների և ձեռնարկությունների նկատմամբ՝ ուղարկիոն հանձնաժողովները չխառնարկությունների նկատմամբ՝ ուղարկիոն համար մեջ, կատարած նվելով դարձագործկոմների կարգադրությունների մեջ, կատարած աշխատանքների և հետազոտությունների հիման վրա, ներկայացնում են, իրենց նկատողությունները այս կամ այն ծախսերի և գործարքների աննպատակահարմարության մասին: Ուեվիզիոն հանձնաժողովների նկատողությունների հետ դարձագործկոմները համաձայն չի ինելու դեպքում հայտնում են դարձագործկոմի ընդլայնած պլենումներին: Ուեվիզիոն հանձնաժողովը ընդլայնած դարձագործկոմների կողմից ընդունած վորոշումների հետ՝ իրենց զեկուցման վերաբերյալ՝ համաձայն չի ինելու դեպքում, բողոքարկման կարգով (в порядке обжалования) այդ վորոշումները կարող են ուղարկել ոկրուգալին գործադիր կոմիտեի պլեվիզիոնին:

10. Ուեվիզիոն հանձնաժողովները իրենց անմիջական պարտականությունները կատարելիս, լին աջակցություն պետք է ստունան տեղական հիմնարկների և մարմինների կողմից: Բացառիկ դեպքում ոկրուգային գործադիր կոմիտեի կողմից ուեվիզիոն հանձնաժողովների աշխատանքներին ոգնելու համար ոկրուգ-ֆինանժնից գործուղվում ե այս կամ այն աշխատակիցը:

11. Ֆին-կոնտրոլ վարչության ձեռներեցությամբ գալրագործկոմի հաշվետվությունը, հաշվետարությունը և տնտեսությունը բեկիզիայի և հետազոտման յենթարկելիս, ըստ հնարավորության մասնակցում ե ուեվիզիոն հանձնաժողովի անդամներից մեկը.

12. Դալրա-գործկոմների գործունելության մեջ այս կամ այն չարաշահությունը հալտնարերելու դեպքում, ուեվիզիոն հանձնաժողովը, չսպասելով ուեվիզիայի վերջացնելուն, պարտավոր ե իրազեկ դարձնել հայտնարերած չարաշահության մասին ինչպես դալրագործկոմին, նույնպես և ոկրուգային գործադիր կոմիտեին՝ շարունակելով իր հետագա աշխատանքները:

13. Ուեվիզիոն հանձնաժողովի անդամները և թեկնածուները (անդամներին փոխարինելու դեպքում), իրենց տարած աշխատանքների համար ստանում են որապահիկ (սույունայի) ըստ աշխատած որերի քանակի, բայց վոչ ավել քան ամսական 4 որվանարկները ստուգելու համար, ոգտվում են դալրա-գործկոմի փոխադրական միջոցներից: Ուեվիզիոն հանձնաժողովի անդամներին տշխատավարձով բավարարելու ծախսները հոգացվում են դալրագործկոմի բյուջեյով—այդ նպատակի համար նախատեսված զումարների սահմաններում:

14. Ուեվիզիոն հանձնաժողովը տեղական բյուջեի կատարման և տնտեսությունը տանելու բացերի մասին զեկուցում և դալրա-խորհուրդների համագումարում, միաժամանակ մտցնելով իր առաջարկությունները նկատում բացերը և անկանոնությունները վերացնելու համար: Ուեվիզիոն հանձնաժողովը իր աշխատանքների մասին զեկուցումներ և տալիս գյուղացիական լայն կոնֆերենցիաներում:

15. Դալրա-ուեվիզիոն հանձնաժողովը իր գործունեյության համար պատասխանատու չե դալրա-խորհուրդների համագումարների առջև:

16. Ոկրուգային և հանրապետական մարմինների կողմից լիազորված անձինք դալրայի սահմանրերում գտնվող պետական հիմնարկների և հեռնարկությունների բեկիզիայի ժամանակ պարտավոր են հայտնել այդ առթիվ դալրա-բեկիզիոն հանձնաժողովներին իրենց վրա դրված պարտականություններից մասին: Այդ դեպքում դալրա-բեկիզիոն հանձնաժողովը իր անդամներից մեկին նշանակում ե նշած աշխատանքներին մասնակցելու համար:

Բնդունված և Ազգենատկործ-
կոմի պրեգիսումի կողմից
(արձան. № 5).
Ազգենատկործկոմի քարտու-
ղաբը Ալի ՄԱՄԵԴՈՎ:

դաշրագործկոմի նիստերում, դայրախորհրդների հերթական
համագումարներում կամ թե լայն հասարակական ժողով-
ներում:

4. Այն բոլորն, ինչ վոր կհայտնաբերեն ռեվիզիայի ժամա-
նակ հանձնաժողովի անդամները, պարտավոր են աքտ կազմել
գրա մասին: Այլ կերպ վոչ ինքը՝ ռեվիզիոն հանձնաժողովը, վոչ
ել ուրիշ հիմնարկներ վոչինչ չեն կարող հասկանալ գործի ելու-
թյունից:

Աքտը պետք է կազմել Յ որինակ. մեկը մնում է ռեվի-
զիոն հանձնաժողովի գործերի մեջ, մուսալ ուղարկվում և այն
հիմնարկին, վորտեղ ռեվիզիա յեւ տարվել իսկ յերբորդ որինակը՝
ոկրուցացին գործկոմին:

Աքտերը ստորագրում են վոչ միայն ռեվիզիոն հանձնաժո-
ղովի անդամները, վորոնք ռեվիզիա յեն տանում, այլ և այն
պաշտոնյաները, վորոնք մասնակցել են ռեվիզիային: Յեթե նրանք
աքտի վորեւ կետի հետ համաձայն չեն, բայց և այնպես պետք է
ստորագրեն աքտը՝ համապատասխան ծանոթության մտցնելով
աքտի մեջ իրենց անհամաձայնության մասին և հետո յե-
րեք որվա ընթացքում պետք է գրավոր բացատրություն տան,
թե վոր կետի հետ և ինչու համաձայն չեն:

5. Հանձնաժողովը իր բոլոր քննարկած հարցերը և կայա-
ցրած վորոշումները նույնպես պետք են մտցնի արձանագրության
մեջ:

Արձանագրությունը պետք է ստորագրեն հանձնաժողովի
բոլոր անդամները և յեթե հանձնաժողովի անդամներից մեկը հա-
մաձայն չե կացացրած վորոշումներին՝ այդ պարագային նրա պա-
հանջով իր առանձին կարծիքը մտցնվում է արձանագրության
մեջ:

6. Հանձնաժողովը պետք է աշխատի, վոր իր գործերի մեջ
լինի կատարյալ կարգ ու կանոն, վորպեսզի ինքը կարողանա
ամեն ժամանակ տեղեկանք վերցնի ցուց տալու վորեւ մեկին՝
խորհրդների համագումարին, ոկրուցացին գործկոմին կամ թե
կենտրոնից յեկած աշխատակիցներին: Դրա համար շատ կարե-
վոր ե, վոր ռեվիզիայի աքտերը և հանձնաժողովի նիստե-
րի արձանագրությունները կազմած լինեն մաքուր և պահպեն
կարգին ու խնամքով:

7. Ռեվիզիա պետք է անել վոչ ուշ քան յերեք ամիսը մեկ
անգամ: Բացի այդ՝ ամեն անգամ, յերբ կիմացվի վորեւ անկար-

ԶԵՐՆԱՐԿ ԴԱՅՐԱ ՌԵՎԻԶԻՉԻ ՀԱՆՁ- ՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

I. ՌԵՎԻԶԱՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՅԵՎ ԱՇԽԱ- ՏԱՆՔՆԵՐԸ

1. Անցնելով իր անելիքներին՝ ռեվիզիոն հանձնաժողովը
յուր անդամներից ընտրում է նախագահ և քարտուղար:

Նախագահը ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները
և նրա նիստերը. քարտուղարը տանում է հանձնաժողովի նիս-
տերի արձանագրությունները, հետեւում է գործերի կարգավոր-
մանը և հսկում է հանձնաժողովի վորոշումները կյանքում անց-
կացնելու վրա:

2. Հանձնաժողովի նիստերում հարցերը վորոշվում են ձայ-
ների մեծամասնությամբ:

Քվեարկության ժամանակ նախագահը ունի նույն իրա-
վունքները, ինչ վոր հանձնաժողովի մյուս անդամները:

Հանձնաժողովի անդամների թեկնածուները կարող են քվե-
արկել այն ժամանակ, յերբ նրանք փոխարինում են հանձնա-
ժողովի անդամներին, նրանց հեռանալու կամ թե ժամանակավո-
րապես բացակայելու դեպքում: Բայց վորպեսզի թեկնածուները
տեղյակ լինեն բոլոր հարցերին, անհրաժեշտ ե, վոր նրանք ևս
միշտ ներկա լինեն հանձնաժողովի բոլոր նիստերին:

3. Կարիք չկա, վոր ռեվիզիան կատարեն հանձնաժո-
ղովի բոլոր անդամները միասին. մեկը կարող է մի աշխատանք
կատարել, մյուսը՝ մի ուրիշ: Բայց ինչ վոր հայտնաբերի հանձ-
նաժողովի անդամներից մեկը, անհրաժեշտ է քննարկել միասին
և ընդհանուր վորոշում ընդունել՝ ամեն մի դեպքում առանձին,
յերբ կարգվի այս կամ այն անկարգությունը կամ անկանոնությու-
նը: Հանձնաժողովում անպայման պետք է լսեն և քննարկեն բո-
լոր մյուս գեկուցումները, վորպիսիք յենթաղրում են գեկուցել

գության մասին, բողոքներ ստանալու պատճառով, այն ժամանակ ստուգումը պետք է կատարել անհապաղ առանց հետաձգելու:

8. Յեթե վորեն հիմնարկի ոեվիզիալի ժամանակ հարկավոր ե դիմել գիտուն (сведуиоющих) անձանց ոգնության՝ բժշկի, գյուղատնտեսի հաշվապահի և այլ այդ գեղքում հանձնաժողովը կարող է հրավիրել նշած անձանց—տեղական աշխատակիցներից:

9. Յեթե հանձնաժողովը ինքը գժվարանում է իր սեփական ուժերով տանել գործավարությունը, արձանագրությունները, կազմել աքտերը և զեկուցումները, այդ գեղքում դարձա-գործի նախագահի համաձայնությամբ կարող է ոգտագործել դարձի աշխատակիցներին:

Հանձնաժողովը դարձալից ստանում է իրեն անհրաժեշտ գրասենյակային պիտույքները:

10. Ռեվիզիոն հանձնաժողովը ընտրվում է մինչև դարձախորհրդի հետեւալ հաջագումար հրավիրելը:

Յերբ վոր կայտնում է նոր սեփիզիոն հանձնաժողովի ընտրությունը, նախակին հանձնաժողովը իր գործերը հանձնում է նորին: Դրա մասին կազմվում է համապատասխան աքտ, վորի մեջ ի միջիալոց ցուց են տրվում ոեվիզիոն հանձնաժողովի այն նկատողությունները և վորությունները, վորոնք կյանքում չեն կենսագործված—մինչև գործերի ընդունելը: Աքտը կազմվում է յերկու որինակ՝ մեկը մնում է հանձնաժողովի գործերի մեջ, իսկ մյուսն ուղարկվում է ովրուգործկոմին:

II. ԲԵՎՀԱՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎՈՒԽՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՓՈԽՀԱՐՄԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՅՐԱ-ԳՈՐԾԿՈՄԻ ՀԵՏ

11. Ռեվիզիոն հանձնաժողովը պետք է իմանա, թե ինչպես են տարվում գործերը դարձայում: Դրա համար հանձնաժողովի բոլոր անդամները պետք է ներկա լինեն գործկոմների բոլոր նիստերին, բայց չեն մասնակցում քվեարկությանը՝ քանի վոր այդպիսի իրավունք նրանց չի տրված:

12. Գագփորձկոմը, դարձալի հիմնարկությունների ու ձեռնարկությունների վարիչները և զանազան աշխատանքների գեկավարները և նշած հիմնարկների ու ձեռնարկությունների, ծառայողները պարտավոր են հանձնաժողովին ցուց տալ ամեն տե-

սակի աջակցություն դարձալի բարձրագույն ռեվիզիալի յենթարկելու ժամանակ, այն եւ:

ա) ըստ հանձնաժողովի պահանջի ցուց տալ բոլոր պետքական հաշվետվությունները, մատյանները, որդերները, պայմանագրերը և ուրիշ փաստաթղթերը, նույնպես և կազմել անհրաժեշտ տեղեկանքներ և տալ քաղվածքներ մատյաններից:

բ) Ներկայացնել նազդ փողերը ստուգելու համար, նույնպես նրա պահանջով ցուց տալ հիմնարկության և ձեռնարկության տնտեսությունը, գույքը, մատերիալները, պահեստները և այլն:

գ) Տալ կարեոր բանավոր բացատրություն, իսկ անհրաժեշտ տության գեղքում զրավոր ձևով պատասխանել հանձնաժողովի բոլոր հարցերին:

12. Անհրաժեշտության գեղքում հանձնաժողովը ֆինանսաանտեսական հարցեր պարզաբանելու համար կարող է հրավիրել ֆինանսական բաժնի վարիչին և ուրիշ անձանց, գորոնք կազմել են հաշվետվությունները:

14. Վորպեսզի սեփիզիոն ժամանակ գործը չձգձգվի, հանձնաժողովի ամեն մի անդամ գործկոմից պետք է ստանա վկայական առ այն, վոր ինքը հանդիսանում է ոեվիզիոն հանձնաժողովի անդամ և այդ ունենա իր մոտ հիմնարկությունը ոեվիզիալի գնալու ժամանակ:

15. Ռեվիզիոն հանձնաժողովի ամեն մի անդամ պետք է իմանա, վոր ինքը, իրեն պաշտոնյա, իր արարքների համար պատասխանառու չե որենքի առջև:

16. Ռեվիզիոն հաիձնաժողովը իր իրավունքներով պետք է ոգտի այնպես, վորպեսզի չխանգարի դարձագործկոմին, նրա համապատությունների և ձեռնարկությունների անընդհանուր աշխատանքների ընթացքը:

17. Հանձնաժողովը ինք մի կարգազրություն անելու իրավունք չունի և գործկոմը չի յենթարկվում նրան: Ռեվիզիոն հանձնաժողովը իր հերթին չի յենթարկվում գործկոմին: Յերկուսն ել մտահոգված են մի ընդհանուր գործով: Յերկուսն ել պետք ե հոգու տանեն ընդհանուր գործի բարեկեցության մասին: Տնտեսությունը կառավարում է գործկոմը: Ռեվիզիոն հանձնաժողովը պետք է ոգնի գործկոմի աշխատանքներին և յեթե մի վորեարան նա չի հասկանում, պարզաբանի և աշակցի նրան իր խորհրդակոմը:

III. ՌԵՎԻԶԻՈՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

18. Ռեվիզիոն հանձնաժողովը պետք է քննի, ճիշտ են հավաքում դաշտայի տուրքերը, մուծումները (ՅՅՈՍԵ) և այլ յեկամուտները. ոգտավետ կերպով են ծախսվում հավաքած գումարները. չեն կատարվում կողմանակի ծախսեր. հաշվով են կատարվում բոլոր ծախսերը. ձեռնտու գներով են առնում այն ամենը, ինչ վոր հարկավոր ե. ամբողջութիւմմբ են պահպանվում դրամները, գնած մատերիալները և այլ գումարը. վնաս չեն բերում գոյություն ունեցող ձեռնարկությունները (յեթե կան այդպիսիները), ջրաղացները, բաղնիքները և այլն:

Հանձնաժողովը վոչ միայն պիտի հսկի այդ բոլորի վրա, այլ և մտածի ու համաձայնության գա դաշտագործկոմի հետ, ինչպես ուղղել գոյություն ունեցող բացերը և այնպես անել, վորպեսզի այդ թերությունները չկըկնվեն:

19. Ռեվիզիոն հանձնաժողովը վոչ միայն պետք է ստուգի ամբողջությամբ են պահվում փողերը և այլ գումարները, խնայողությամբ և շահավետությամբ են ծախսվում այդ բոլորը, այլ և շատ կարեոր ե, վորպեսզի քննի ծախսումները սահմանված կարգով են կատարվում, թե վոչ:

Բյուջեն կազմում ե գործկոմը

Ռեվիզիոն հանձնաժողովը պետք է հսկի, վորպեսզի դաշտի բոլոր յեկամուտները հավաքվեն և հավաքած գումարները ծախսվեն կանոնավոր կերպով ու այն կարգով, վորպիսին նշանակված և ըստ բյուջեի:

Այդ իսկ պատճառով ռեվիզիոն հանձնաժողովի գլխավոր անելիքը կայանում է նրանում, վոր հետեւ խնայողությամբ և կանոնավոր ե կատարվում բյուջեն, թե վոչ:

IV. ՌԵՎԻԶԻՈՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ, ՆՐԱ ՁԵՎԵՐԸ

20. Տնտեսությունը ստուգելու ժամանակ հանձնաժողովը պետք է նկատի ունենա՞

- 1) ինչպես են հավաքվում, ծախսվում և պահվում փողերը.
- 2) ինչպես են գնվում, ընդունվում վաճառողներից, բաց թողնում մատերիալը, ուտեստի պաշարը (որոպաչ) և այլ գնված գումարը.
- 3) ինչպես են կատարվում զանազան շինարարական և այլ աշխատանքները:

21. Ստուգման աշխատանքները կարելի յե տանել զանագան ձեռվ. կարելի յե գնալ տեղում հիմնարկները, պահեստները, աշխատանքի վայրեր և այնտեղ ստուգել փողերը, մատերիալը գումարը, աշխատանքի ընթացքը, — այս բոլորը կոչվում ե փաստական ստուգում: Կարելի յե ընդհակառակը, տեղում չինելով հանդերձ՝ գործկոմում վերանայել մատյանները, փաստաթղթերը և այլ հաշվետվություններ, վորպեսզի ստուգել հաշիվների ճշությունը, գնումների ձեռնտու լինելը, — այս կոչվում ե գործումնետալ ստուգում:

22. Հանձնաժողովի համար ամենազլիավորը, վոր նա պետք ե իմանա, այն ե՝ ամբողջությամբ են պահվում փողերը, մատերիալը և զանանազան գումարներ. ինչպես են կատարվում աշխատանքները և տարգում տնտեսությունները գայրայի հիմնարկներում: Այդ իսկ պատճառով նա պետք է կատարի փաստական ստուգումներ:

Բայց ինչպես հարկավորն է ստուգել փողերը, գումարը, տընտեսավարությունը, պետք է սկզբից իմանալ, ի՞նչ փողեր են մուծել դրամարկղը, ի՞նչ մատերիալներ, գործիքներ, պաշարներ գնված են չեղել և հանձնված պահանատներին. տնտեսարարությամբ ե կատարված ծախսները. շահավետությամբ ե ոգտագործած ձեռնարկությունը գումարը և այլն:

Այս բոլորն իմանալու համար պետք է քննել հաշվեմատյանները, վորոնց մեջ գրփում են փողերը, մատերիալը կամ պաշարը. պետք է վերանայել փաստաթղթերը, վորոնց մեջ ցուցը ե տրված թե ինչ ե առված, վաճառզները վհրքան փող են ստացել իրենց ապրանքների համար, վհրքան ե վճարված աշխատանքների համար և այլն:

Միայն պետք է հիշել, վոր այսպիսի գործումնետալ ստուգումը (ըստ գործումնետների և մատյանների), պետք է ոգնի, թե ինչպես ե տարգում տնտեսությունը, ինչպես ե կատարվել բյուջեն դաշտայի հիմնարկներում, բայց անպայման գնալ տեղերը՝ հիմնարկները և նայել ի՞նչպես ե այդտեղ գնում գործը:

V. ԴԱՅՐԱ-ԳՈՐԾՎԿՈՄԻ ԴՐԱՄԱՐԿՈՎԻ ՌԵՎԻԶԻԱՆ

23. Ռեվիզիոն աշխատանքների ելական մասերից մեկը հանդիսանում է գործկոմի դրամարկղի ստուգումը: Այդպիսի ստուգումներ պետք է կատարեն վորքան կարելի յե հաճախ: Վորքան հաճախ տեղի կունենան ստուգումները, այնքան ճշտությամբ կը պահպեն փողերը:

Դրամարկղի ստուգումը անշուշտ պետք է կատարել գործկոմի նախագահի կամ նրա տեղակալի և կասսիրի ներկայությամբ:

24. Դրամարկղի ստուգումը պետք է սկսել փողերի ստուգումից և յեթե կան—արժեքափոր թղթերից: Վորպեսզի չխափանել դրամարկղի աշխատանքները, յեթե ստուգումը կատարվում է աշխատանքի յեռուն շրջանում, կասսիրին ստորագրությամբ պետք է տալ այնքան փող, վորքան պահանջվում է նրա ընթացիք հաշիվների համար և հետո ստուգել մնացած գումարները:

25. Փողերը հաշվելուց հետո, դրամարկղի մատյանում պետք է պարզել, վորքան նազդ փող պետք է լինի դրամարկղում ուղղիվալի որը: Յեթե այդ գումարը անց է կացրած (выведена) մատյանում այդ դեպքում հաշվել փողերը:

Են գեպում, յեթե ըստ մատյանի փողերը շատ կլինի կամ քիչ, քան թե փողերը հաշվելուց հետո, կասսիրը պետք է բացատրի այդ գումարուն պատճառները և նրա բացատրությունը պետք է ստուգել:

Բացի այդ, պետք է ստուգել ճիշտ և անցկացրված դրամարկղի մատյանում ըստ փաստաթղթերի, սկսած այն որվանից, վորթից կատարվել և վերջին ստուգումը և հաշվել մատյանի իտոգները:

26. Յեթե նազդ փողերը քիչ լինի, քան թե ցուց է տրված մատյանում և դրա փոխարեն ներկայացնի պարտագրեր (ДОЛГОВЫЕ ЗАПИСКИ), վորոնցով փող է պարտք տրված, այդ պարագայում աքտ կազմելու ժամանակ անպայման պետք է մատյանշել այդ հանդամանքը, վորովհետեւ պարտագրերով պարտք տալը ապորինի քայլ և համարվում և ուղղվելուն հանձնաժողովը պետք է պնդի, վորպեսզի վերջ արվի նման յերեվութիւն:

27. Դրամարկղի ստուգման մասին պետք է կազմել աքտ, վորի մեջ անպայման մացնվում և այն բոլորը, ինչ վոր հայտնաբերված և ուղղվելու ժամանակ: Դրամարկղի մատյանի մեջ մընացող փողերի գումարի տակ, ստորագրում են ուղղվելուն հանձնաժողովի այն անդամները, վորոնք ստուգել են դրամարկղը:

Յեթե հայտնաբերվի, վոր նազդ դրամի քանակը չի համապատասխանում մատյաններում անցկացրած գումարներին կամ թե մաքրումներ (подчистка) և այլ անկարգություններ, այս բոլորը մանրամասնորեն պետք է գրվի աքտի մեջ:

28. Աքտը ստորագրում են ուղղվելուն հանձնաժողովը. գամմերը, նույնպես և—ուղղվելուն ներկա յեղող գործկոմի նախագահը եւ կասսիրը: Յեթե նրանք համաձայն չեն աքտի բոլոր կետերին, այդ գեպքում նույն աքտի մեջ, իրենց ստորագրությամբ, պետք է մացնեն իրենց առարկությունները և բացատրությունները, բայց աքտը ստորագրելուց հրաժարվելու իրավունք չունեն:

29. Յեթե դրամարկղում ավելորդ փող հայտնաբերվի, քան թե անց է կացրված մատյանում, այդ պարագայում նշան գումարը մուտք գրել մատյանում:

Յեթե փողը պակասում է, կասսիրը պետք է լրացնի—մըտցնելով պակասորդը, վորի կատարման վրա հանձնաժողովը պետք է հսկի:

Յեթե դրամարկղից խոշոր գումար է պակասում, զեղծարարության կամ չարաշահության պատճառով, այդ գեպքում պետք է կնքել դրամարկղը, մինչև այդպիսին գործկոմի պատասխանատու աշխատակիցներից մեկին հանձնելը և հայտնել դրա մասին ոկրուգավին ֆինրաժնին և մելիցիավին:

30. Աքտում մատնանշած բոլոր թերությունները վերացնելու համար, գործկոմի նախագահը պետք է ձեռք առնի համապատասխան միջոցներ, իսկ հանձնաժողովը պետք է հսկի այդ բոլորի կատարման վրա:

31. Դրամարկղի ուղղվելուն պետք է տեղի ունենա հանկարծակի՝ առանց նախորդը նախագործացնելու դրա մասին: Բայց հանձնաժողովը կարող է մասնակցել նաև հերթական ստուգումներին, վորպիսիք պետք է կատարվեն գործկոմի կողմից տմնա ամիս: Հանձնաժողովը պետք է հետեւ, վորպիսիք այդպիսի ստուգումներ կատարվեն ամեն ամիս:

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԱՏՅԱՆԻ (книга) ՍՏՈՒԳՈՒՄԸ

32. Վորպեսզի վերջնամականապիս համոզվել վոր փողերը պահպում են ամբողջությամբ, դրամարկղալին մատյանը պետք է ստուգել ըստ փաստաթղթերի, վորովհետեւ կարող է պատահի, վոր մատյանում մուտքը և յելքը ճիշտ և հաշված, բայց վոչ բոլոր գումարները և ծախսերը ճիշտ անց է կացրված մատյանում:

Վորպեսզի իմասնալ, թե ինչպես պետք է տարվի դրամարկղալին մատյանը և ինչպիսի վայրելություններ են լինում, հարկա-

վոր և Ցանոթանալ գալրա-գործկոմների հաշվետարության և հաշվետվության հրահանգի հետ:

33. Հստ հրահանգի առաջարկվում ե, վորպեսզի ամեն անգամ գործկոմի դրամարկղը փողեր ընդունելիս, գրվի մուտքի որդեր-կարգադրության փողերն ընդունելու մասին և ամեն անգամ փող գուցս գրելիս գրվի լեկի որդեր-կարգադրություն փողերը բաց թողնելու մասին. բացի ծախքերի որդերներից, վորոնցով դրամարկղից պետք ե փող բաց թողնվի, պետք ե լինի նաև այն անձնագործության սոորագրությունը, ով ստանալու և փողը:

Հստ այդ որդերների դրամարկղում ամեն անգամ փող ստանալիս, դրամարկղալին մատյանում անց ե կացնվում, վորպես մուտք և ամեն անգամ փող բաց թողնելիս մատյանում լեկը և գրվում:

Դրամարկղալին մատյանի դրանցումները ստուգելու համար՝ պետք ե համեմատել այդ գրանցումները որդերների հետ:

34. Արդերները գրվում են առանձին մատյանում, վորից հետո պոկվում են և մատյանում մնում ե միայն որդերի կոճղը (корешոկ): Այդ կոճղերով միշտ կարելի ե ստուգել, արդյոք բոլոր գրած որդերներն են մատրիչած դրամարկղալին մատյանի մեջ:

35. Դրամարկղալին մատյանը ստուգելիս պետք ե հետեւ.

ա) ճիշտ ե կատարված գրանցումները ըստ որդերների, գումարների բաց թողնելը և ամեն մի մուծում. չկամ տարրերություն թվերի մեջ. չի գրված մատյանում քիչ կամ շատ գումար, քան թե ցուց ե արված որդերում. չի կրկնվում լերկու անգամ վորեւ ծախս.

բ) չի գրված արդյոք մատյանում մուտք կամ լեկը, վորի համար չկամ համապատասխան որդեր.

գ) կամ արդյոք բոլոր ծախքի որդերներին կից ստացողի ստորագրությունը կամ անդորրագիրը (ԿՎԻՏԱՆՑԻԱ) փոստ հեռագրատան վարչության՝ նշած գումարները ընդունելու և ուղարկելու մասին.

դ) ճիշտ ե հաշված դրամարկղալին մատյանում փողերի մնացորդը և ճիշտ ե հաշված մնացորդը ստուգման որը.

է) չկամ արդյոք մաքրումներ (ՊՈՃԿԻՇԿԱ) և ուղղումներ դրամարկղալին մատյանում, փորոնց մասին մատյանում չի մատնանշած, վոր այդ ուղղումներին պետք ե հավատալ: Զկան պատռած կամ պոկած թերթեր դրամարկղալին մատյանից, վորպիսի հանգամանքը իսկուն և լեթ նկատվում ե. վորովհետև մատյանի

բոլոր թերթերը պետք ե լինեն համարակալված, ժամակիցնված, (պրօշնորած) հաստատված կնիքով և ստորագրությամբ.

զ) իր ժամանակին և կատարված բոլոր գրանցումները դրամարկղալին մատյանում, թե վոր:

36. Բացի այդ՝ դրամարկղալին մատյանում մուտքի գրանցումները ստուգելիս, պետք ե հատուկ ուշադրություն դարձնել վոր գրաֆում և գրված փողերը. մի գրաֆում գրվում են այն գումարները, վորոնք կազմում են դարպակի լեկամուտը, իսկ մյուս գրաֆում—այլ լեկամուտներ (պետական տուրքեր և այլ լեկամուտներ):

Այդ ուրիշ լեկամուտները գրում են առանձին դրաֆաններում նրա համար, վոր չի կարելի այդ գումարները ծախսել դարպակի կարիքների համար, այլ հարկավոր ե հանձնել ըստ պատկանելուն: Վորքան այդ գումարներից մուտք ե գրված, նույնքան և պետք ե ծախս գուրս գրած լինի ըստ պատկանելուն հանձնելու համար: Ծեփփիոն հանձնաժողովը պետք ե ստոպի արդյոք չի ձեզ ձգվում նշած գումարների հանձնումը և բոլոր գումարներն են տրվում նրանց, ում հարկավոր ե:

37. Բոլոր անկանոնությունները և սխալները, վորոնք կը նկատվեն ուկիցիոն հանձնաժողովի կողմից դրամարկղալին մատյանը ստուգելու ժամանակի պետք և մտցնել ուկիցիալի աքտի մեջ:

Այսպիսով՝ հանձնաժողովը կստուգի ճիշտ են ընդունվում և բաց թողնվում դրամարկղից բոլոր գումարները և ամբողջությամբ են պահպան լեղած փողերը:

ԴԱՅՐԱ-ԲՅՈՒՋԵՅԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

38. Հանձնաժողովը գործկոմի դրամարկղը ստուգելուց հետո՝ պետք ե սկսի ստուգել, թե ինչպիս ե կատարվում դարպարուչնեն. բաց մատյանի ստուգումից չի պարզվի. Վոր համար դրամարկղալին մատյանի փոխարեն պետք ե քննել դարպակի մուտքի և լեկի մատյանները: Թե ինչպիս պետք ե տարվեն մատյանները, վոր մասին մատնշված և դարպակործկոմների հաշվետարության և հաշվետվության հրահանգում:

39. Բլուջելում ամեն մի լեկամտի համար հատկացրված ե առանձին տեղ, նույնպիս և ծախսերի, նայած թե ինչի համար ե նշանակված՝ գործկոմի պահպանման, բուժական գործի և այլ

կարիքների համար ու այդ բոլորին բյուջեյում առանձին տեղ է հատկացնվում: Ամեն մի բաժանում իր հերթին ստորաբաժանվում է մասերի, վորոնք կոչվում են պարագրաֆներ և ունեն իրենց առանձին համարները:

Պարագրաֆները իրենց հերթին ստորաբաժանվում են ավելի փոքր մասերի, վորոնք կոչվում են հոդվածներ—վորոնց համեմատ տարգում և հաշիվ: Վերջապես՝ և նաև հոդվածները ունեն իրենց սառարարաժանութեաները, վորոնք նշանակվում են առանձին տառերով և կոչվում են լիտեր: Բյուջեյում ամեն մի մասի զիմաց գրված և ինչ յեկամուտ կամ ծախս և հաշված և ինչ գումար և նշանակված յեկամուտների և ծախսերի համար:

ԴԱՅՐԱՅԻ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

40. Դայրայիկամուտակին մատյանում ամեն մի յեկամտի համար հատկացվում է առանձին տեղ, վորը նշանակվում է նույն ձեվով՝ ինչ ձեվով ըստ բյուջեի: Այդ մատյանից յերեսում ե, թե վորքան յեկամուտ և սպասվում ըստ բյուջեի ամեն ամիս և իրոք վորքան և մուծվել ամեն, որ:

Մատյանի միջ յեկամտի մուծումները գրվում են նույն որդերից, վորից և գրվում է զբամարկղային մատյանում: Այդ իսկ նպատակով ամեն մի որդեր ունի բաժանութեանը — պարագրաֆ, հոդված և լիտեր, վորոնց տակ ըստ բյուջեի ցույց է տրված յեկամուտը:

Այդ իսկ պատճառով յեկամտի մատյանները, ինչպես և զբամարկղայինը պետք է համեմատել յեկամտակին որդերների հետ:

41. Յեկամտի մատյանի ստուգումից հանձնաժողովը կիմանա—այնպես են մածվում յեկամտները, ինչպես նշանակված ե ըստ բյուջեի և հաջողութեամբ են մուծվում. չկամ արդյոք յեկամրտի չնավագրումներ (հեծօբօր) և չի կարելի արդյոք գործկոծին խորհուրդ տալ վրալեսովի այլ չնավագրումները չլինեն:

42. Հարկերից մուծված յեկամուտների ստուգման ժամանակ պետք է պարզել, հարկատուները նույն չափով են մուծում հարկերը, ինչպիսի գումար նշանակված է. արդյոք սահմանված ժամկետին են մուծվում հարկերը, զանձվում են պենիս—մուծումների ժամկետը անցկացնելու համար. զանձվում են բոլոր նեղումկաները (հեծօմք). բոլոր միջոցներն են ձեռք առնված անուղղելի հարկատուների նկատմամբ և ալիս:

43. Գյուղմիասհարկի մուծումները ստուգելու դեպքում պետք է պարզել իր ժամանակին են կատարվում ֆին-մարմինների կարգադրությունները. նա մանավանդ տրվում է համապատասխան ցուցմունքները գյուղխորհրդներին համայնքների ցուցակը կազմելու համար. ստուգվում են այդ ցուցակները. իր ժամանակին են ուղարկվում գյուղխորհրդներին տուրքաթերթերը (օկладնու լիստել). կամ արդյոք հսկողություն—գյուղմիասհարկը իր ժամանակին վճարելու համար. չի լինում արդյոք ձգձգումներ գյուղխորհրդներում՝ հավաքած գումարները ուղարկելու նկատմամբ. ճիշտ և տարգում հաշվեառումը և հաշվետվությունը գյուղմիասհարկի մուծումների մասին:

44. Կապալով տրված հոդային գույքերի, ձեռնարկությունների և հաստատությունների կամ շենքերի յեկամուտները ստուգելու ժամանակ, պետք է պարզել, բոլոր այդ յեկամուտներն են հաշվեառման յենթարկած. նույնպես և քննել կապալով տրված պայմանագրերը, վորպեսզի պարզել նույն չափով ե գանձվում, ինչ չափով պայմանագրով նախատեանված է. վճարումները նշանակված ժամկետին են մուծվում, թե վոչ:

45. Զանազան ձեռնարկություններից և գույքերից ստացած յեկամուտները ստուգելիս (վորոնք կառավարում են հենց ինքը գործկոմը) պետք է պարզել, արդյոք վնաս չի ստացվում ամեն մի ձեռնարկությունից. շահավետությամբ և ոգտագործվում ձեռնարկությունը կամ գույքը. չի կարելի կրամատել նրա ծախսերը. լավ չեր լինի արդյոք կապալով տալ կամ թե բոլորովին փակել:

Դրա համար հանձնաժողովը պետք է քննի բոլոր յեկամուտները և ծախսերը ըստ տարվող հաշվետվությունների այս կամ այն ձեռնարկության կամ գույքի նկատմամբ, նույնպես և տեղում քննի (փաստական ստուգում) ինչպես և այնտեղ տարգում գործը:

46. Անպետք և փչացած գույքի վաճառումից ստացած յեկամուտները ստուգելու ժամանակը պետք է պարզել ինչպես և կատարվել վաճառքը և ձեռնարկը յե արդյոք:

ԴԱՅՐԱՅԻ ՇԱԽՄԱՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

47. Ծախսերի մատյանը տարվում է նոյն ձեվով, ինչ ձեռք վով վոր յեկամտինը:

Մատյանում ամեն մի ծախսին հատկացրված և առանձին տեղ, վորտեղ ցուց և տրված թե ամեն մի ամիս վորքան ծախս և նշանակված և իրոք վորքան և տրված ամեն մի տեսակի ծախսի համար, վորը նշանակված և ըստ բյուջեի:

Այդ մատյանի մեջ ծախսերի գլանցումը կատարվում և այն որդերներից, վորոնցից զրանցումը կատարվում և դրամարկը բոլոր մատյանում:

Այդ իսկ պատճառով նշան մատյանը պետք և համեմատել ինչպես և դրամարկղայինը, ծախսերի որդերի հետ և պարզել—բոլոր որդերներն են մացրված մատյանի մեջ:

48. Այդ ստուգման ժամանակ նախ և առաջ պետք և քըննել ճիշտ և մատյանում անկացրած ծախսերը ըստ իրենց տեղերի. գրա համար հարկավոր և համեմատել բյուջեի նշանակումների անունները ըստ ամեն մի տեսակ ծախսերի այն կարիքների նկատմամբ, վորոնց համար տրված և փորձերը ըստ որդերի.

Կարող ե պատահի, վոր ծախսը գրած և ուրիշ տեղ և փորձերը բաց են թողած այնպիսի կարիքների համար, վորոնց նկատմամբ բյուջեով վոչինչ չի նախատեսնված:

Կարող ե պատահի վոր ծախսը իր տեղում չի գրած, վորովհետև բյուջեով նախատեսնված բոլոր գումարը արդեն ծախսված ե:

Կարող ե պատահի և այնպես, վոր որդերները ծախսերի մատյանում չեն գրած. վորովհետև փողերը տրված են վաշ թե դարձից, այլ ուրիշ լեկամուտներից (պետական հարկերից, ոկրուգային գործկոմի լեկամուներից և այլն):

Այս բոլոր սխալները փողերի ծախսման հարցում կամ ինչպես ասում են բյուջեի խախտումներ, շատ մեծ չարիք են, վորովհետև քայլայում են դաշտական տնտեսությունը. Այդ իսկ պատճառով նման խախտումները անպայման պետք և մտցնել ոեղիքին աքտերի մեջ և դրա դեմ համառ պայքար պետք և տանել մինչև իսպառ արմատախիլ անելը:

49. Բյուջեի խախտումները վոչ բոլոր դեսկերում կաշելի չեն նկատել ըստ ծախսերի որդերների և մատյանի գրանցումների, վորովհետև մատյանում ծախսերը կարող ե ցուց տրված լինի վոչ լրիդ ճշտությամբ: Այդ իսկ պատճառով, վորպեսպի ստուգումն ավելի լրիվ լինի, ծախսերի մատյանը

քննելիս պետք և ստուգել վոչ միայն որդերները, այլ և փաստաթղթերը, վորոնց հիման վրա գրվում են որդերները:

Որդերները գրվում են՝ աշխալաձի ծախսերը հոգալու համար, համաձայն ներկալացրած պահանջացուցակի (требовательные ведомости), աշխալաձը տալու ցուցակի, գնումների համար վաճառականների ու պակերակատարների (поставщик) ներկալացրած հաշիվների, պայմանագրերի ու ընդունման մասին կազմած աքտերի հիման վրա և ըստ նախահաշվի կատարած աշխատանքների, վորի համար լեղել և համապատասխան կարգադրություն: Այդ փաստաթղթերի հիման վրա կարելի չեն լեզրակացնել—չկան արդյոք բյուջեի խախտումներ, նույնպես և ձիշտ են կատարած բոլոր նախահաշվիները (расчет) գուրս գրած գումարների նկատմամբ: Ապօրինի կերպով գուրս չեն գրված գումարներ, խնայողությամբ են ծախսված բոլոր փողերը և ընդհանրապես ոգտագետ ձեզով և կատարված ծախսերը:

Այդ իսկ պատճառով ծախսերի մատյանը ստուգելիս, հարկավոր և խկույն և չեթ քննել, վոչ միայն բյուջեի խախտումները, այլ ընդհանրապես ինչպես և կատարվում ծախսերը:

50. Ծախսերի այդպիսի ստուգման ժամանակ պետք և հետեւ վել թե ինչպես են կիրառում գործկոմները և հիմնարկները ինսպության ըեծիմը: Այս նշանակում են քննել ինչ միջոցներ են ձեռք տոնավում անտեղի, անողագետ և անշահավետ ծախսերը վերացնելու համար:

Այդպիսի ծախսեր կարող են լինել.

ա) Աշխալաձի մեջ ամեն տեսակի վճարումներ—սահմանված աշխալաձի նորմայից դուրս. հիմնարկների շենքերից այս կամ այն աշխատակցներին բնակարան ջեռուցումով (отопление) և լույսով, վորոնց որենքով չի համում. հարկավոր մասնագետի փոխարեն ուրիշին հրավիրելը (գլուղանտես հողաշափ, տեխնիկ և այլն). վարչական կամ գործադարձության գծով ավելորդ ծառայողներ ունենալը՝ առանց վորոնց կարելի չեն գործը տանել:

բ) Շրջագայութի գնալը, մասնավոր և ավելորդ գործուղումներ, ինչպես որինակ՝ մի վորի և գործ պարզելու համար, վորի վերաբերյալ հարցումի միջոցով կարելի չեն ստանալ գրավոր տեղեկություններ:

գ) Տնտեսական, մթերման և շինարարական աշխատանքների վերաբերյալ, շինանյութերի և պաշարեղենի գնումներն այն-

պիսի ժամանակ, յերբ զբանք թանգ են ծախվում և հնարավոր ե իր ժամանակին գնել ավելի եժան. գոյություն ունեցող գներից թանգ վճարելը. չափազանց մեծ չափերով պաշարների մթերում կատարելը, վորոնք յերկար ժամանակ չեն ոգտագործվելու և նույնիսկ կարող են փշանան. թանգարժեք իրերի գնումներ կատարելը, յերբ հնարավոր ե գնել ավելի եժան գնով:

Դալրայում կարող են լինեն ձեռնարկություններ, վորոնք վաս են բերում և նրանց վրա ծախսվում ե բյուջեի միջոցներից. մինչդեռ առանց այդպիսի վասարեր ձեռնարկության հնարավոր ե յուա գնալ:

Կարող ե պատահի, վոր մի քանի հիմնարկներ գտնվում են այնպիսի վայրերում, վորակ ազգարնակչությունը հնարավորություն չունի ոգտվելու, ուստի ենրանց վրա կատարած ծախսերը չեն տալիս այն ոգուտը, վորպիսին պետք եր ստացվեր. իսկ յեթե այդ հիմնարկը փոխադրել մի ուրիշ տեղ, այդ դեպքում նրա ոգտավետ աշխատանքը կընդլայնվի:

Պատահում ե նույնպես, վոր բյուջեով բաց թողնված գումարներից փոխարինաբար ոժանդակ գումարներ ե տրվում այնպիսի հիմնարկների, վորոնք պետք ե պահվեն իրենց սեփական միջոցներով, մինչդեռ ըստ բյուջեի այդպիսի գումարներ բաց թողնելը չի թույլատրվում:

Այդ իսկ պատճառով նման ձեզով գումարներ բաց թողնելը կարող ե վատթար, կերպով անդրադառնա այն գործի վրա, վորի համար բյուջեով նախատեսնված են այդ գումարները:

Բոլոր այդպիսի ավելորդ, անոգտավետ և անարդյունավետ վճարումները խախտում են խնայողական բեմիմը և դրանց դեմ հարկավոր ե տանել մշտական պարար:

51. Մի քանի դեպքերում փողերն ուղղակի կերպով չի տրվում նրան, ում հարկավոր ե ստանալ այդ գումարը, այլ առըվում և աշխատակիցներին գնումներ և վճարումներ կատարելու համար. Այդ ձեզով բաց թողնված գումարը կոչվում ե կանխավճար (ավահ) կամ թե գումարներ, վորոնց ծախսման մասին պետք ե ներկայացնել հաշվետվություն. վորովնետե այդ գումարը ստացող աշխատակիցը այն ծախսերի մասին, վորոնք նա անում ե, հաշվետվություն ե ներկայացնում գործկոմին:

52. Տրված կանխավճարները ստուգելու ժամանակ հանձնաժողովը պետք ե քննի՝

ա) Բաց չեն թողվել կանխավճարներ մեծացրած չափով հակառակ որենքով սահմանված գումարների.

բ) Չեն յեղել նոր գումարների բաց թողնելու դեպքեր այն աշխատակիցներին, վորոնք հաշվետվության չեն ներկացրել ստացած գումարների մասին.

գ) Իր ժամանակին են ներկայացնում հաշվետվությունները կամ թե ձգձգում են: Վերջին դեպքում պետք ե պարզել, ինչ միջոցներ և ձեռք առնված հաշվետվություններն իր ժամանակին ներկայացնելու համար:

դ) Յեթե հաշվետվությունը լրիվ չի ներկայացրած և գումարներից մնացորդ կա աշխատակիցի մոտ, այդ դեպքում շուտ ե վերադարձել աշխատակիցը իր մոտ մնացած գումարը, առանց ձգձգումների. հաճախ ե պատահում, վոր ստացած կանխավճարներից մնում են մեծ մնացորդներ և յեթե նկատվում ե այդպիսի դեպք, առաջարկել գործկոմին, վորպեսզի կանխավճարները տըրվեն սահմանափակ չափով:

53. Հաշվետու անձանց մատյանները ստուգելու ժամանակ հանձնաժողովը պետք ե պահանջի իսկական հաշվետվությունները՝ փաստաթղթերին կցված բոլոր հավելվածներով: Այդ փաստաթղթերը ստուգելու ժամանակ, պետք ե վարվել այն ձեփով, ինչ ձեփով պետք ե ստուգել հենց գործկոմի իրեն ծախսերը: Պատք ե քննել, չկա արդյոք բյուջեի խախտումներ. խնայողությամբ և ոգտավետությամբ ե ծախսված փողերը, թե վոչ:

54. Խնչպես վիրն ե ասված՝ մատյանների և փաստաթղթերի ստուգումը հանդիսանում է յերկրորդական միջոց, վորպեսզի պարզել, թե ինչպես ե տարվում դալրայի հիմնարկների տնտեսությունները: Երա համար կարիք չկա քննել բոլոր մատյանները սկզբից մինչև վերջը, այլ կարելի յե ստուգել՝ ընտրելով դրանցից մի քանիսը: Այդ նշանակում ե, վոր ստուգման համար կարելի վերցնել վոչ թե բոլոր մատյանները, այլ մի քանիսը՝ յելքի կամ մուտքի: Հարկավոր ե ընտրել անպիսիները, վորոնց մասին տեղեկություն կա, վոր ամեն ինչ կարգին չե կամ թե մի քանիսում և առաջ ե նկատվել անկարգություններ, կամ թե վերջապես մուտքի յելքի մատյաններից, վորոնք դալրայի տըրացնեսության համար ունեն առանձնահատուկ նշանակություն:

55. Մատյանները և փաստաթղթերը ստուգելիս, հանձնաժողովը պետք ե քննի, կիրավում են արդյոք հրահանգում մատնշնված ցուցմունքները, դալրա գործկոմների հաշվե-

տարության և հաշվետվության նկատմամբ—զործկոմը ինչպիսի հաշվեմատյանները և հաշվետվությունները պետք ե տանի:

Այդպիսի ստուգումը կոչվում է հաշվետարության և հաշվետվության ստուգում: Այդպիսի աշխատանքներ տանելը շատ կարելոր ե. քանի զոր լեթե մատյանները և հաշվետվությունները աչքաթող ե արված կամ չի տարված՝ հանձնաժողովը չի կարող հասկանալ, թե ինչ է կատարվում զործերի և տնտեսության մեջ:

ՄԱՏԵՐԻԱԼ ԳՈՒՅՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ (օборոտы) ՍՏՈՒԳՈՒՄԸ

56. Ռեվիզիոն հանձնաժողովը զործկոմի մատյաններից և փաստաթղթերից կնկատի, թե զործկոմի կամ ձեռնարկությունների ու հիմնարկների աշխատակիցները, ինչպես են վարվում իրենց տրամադրության տակ լեզած զումարների հետ, վորպիսիք տրվում են նրանց. վորպես կանխավճար:

Բաց թողնված զումարներով գնում են զանազան պաշարեղեն, մատերիալ և այլ մատերիալ գայք: Պետք է իմանալ այն բոլորը, ինչ զոր մթերված և գնված ե, պահվում ե թե վատնը վում ե:

Դրա համար անհրաժեշտ է տեղում—հիմնարկներում և ձեռնարկություններում մատերիալ հաշվետվության և մատերիալ գույքի ստուգումը կատարել:

57. Մատերիալների և պաշարների հաշվետումը կատարելու համար, խորոր ձեռնարկություններում պետք է ունենան առանձին մատերիալ մատյաններ: Իսկ մանր հիմնարկներում, այն ե՝ դպրոցներում հիմնարկներում, թեկուղ հենց ավելի հասարակ ձեզով պետք ե տարգեն զրանցումներ՝ ստացված մթերքների ու մատերիալների մուտքի և լեկքի մասին:

Այդպիսի մատյաններում ըստ զրանցումների՝ համեմատելով դրանց ծախսի և մուտքի փաստաթղթերի հետ, ըստունված և բաց թողած մատերիալի մասին, նույնպես և զրանցումների համեմատությունը, մուտքի որդերների հետ՝ ուղիղիուն հանձնաժողովը պետք և ստուգի.

ա) Ձշտությամբ են տարվում մատերիալ մատյանները և կարգին են պահվում փաստաթղթերը, վորոնցից զրանցումներ և կատարված մատյանների մեջ. չկմն արդյոք մաքրումներ (ՈՃԿԱԿՏԿ) և առանց ծանոթության ուղղումներ, արդյոք չկան կասկա-

ները մատյաններում.

բ) Մուտք և գրված, ստացված, գնված և մթերված զույքը և իր ժամանակին և արված: Դրա համար հարկավոր և համեմատել մատյանի զրանցումները մուտքի փաստաթղթերի հետ:

գ) Մատյանում ձի՞շտ և նշանակված բաց թողնված գույքը, այն քանակով, այն գնով, այն գործի համար, և այն մարդուն, ինչպես այդ ցույց և արված ծախսի փաստաթղթում.

դ) Արդյոք ձի՞շտ և դուրս գրված, փչացած և անպետքացած զույքը, մատերիալը և՝ պաշարը: Բոլոր այսպիսի գեղքերում հիմնարկի կողմից իր ժամանակին պետք ե կազմվի համապատասխան աքտ անպետքացած, փչացած և կորած իրերի մասին, բացատրելով զրանց պատճառները.

յի) Մատյանում ամսի վերջին ձի՞շտ և հաշված գույքի մընացորդը:

զ) Ձի՞շտ են փոխադրված այդ մնացորդները անցած տարվա մատյաններից նոր մատյանների մեջ.

ե) Ստուգիկ են արդյոք հիմնարկների կողմից գույքի մնացորդը, հաշվելով այդպիսիները նրանց պահելու տեղում, պահեստներում և մթերանցում (кладоваяյ):

Այդպիսի ստուգումների մասին ամեն անգամ պետք է կազմել համապատասխան աքտ և նման ստուգումը ըստ հնարավորության պետք և կատարվի ամեն ամսի վերջին և համեմատնելու տարվա վեպս տարվա վերջին որերում:

58. Յեթե ըստ աքտերի, գույքերի ստուգման ժամանակ հիմնարկի կողմից ցույց կարգի վորեե գույքի մնացորդ, այդ դեղքում պետք և ստուգիկ մտցրված և մատյանի մեջ այդ մընացորդը, ինչպես մուտք: Յեթե ընդհակառակը կհայտնաբերվի պակասորդ, պետք և պարզել գրա պատճառը, չկա արդյոք չարշանություն (զլօյութեալի), ուեկիպիոն հանձնաժողովը ինքը կարող և նազդ գույքի վերաբերյալ ստուգում կատարի ըստ մատյանի զրանցումների: Այդ պարագայում հարկավոր ե, վորպեսզի այդպիսի ստուգման ժամանակ մասնակցի աշխատակիցներից մեկը, վորը այդ գույքի պահպանման համար պատասխանատու լի հանդիսանում: Այդպիսի ստուգման ժամանակ պետք ե քննել լավ վորակի պաշար, մատերիալներ և այլ գույք և ձեռք բերված, լավ պահպաններում են պահվում այդպիսիները և արդյոք չեն փչանում:

Հանձնաժողովը ստուգման արդյունքների մասին՝ պետք է կազմի աքտ, դիցուկ այսպես՝ ինչ վիճակում և գործկոմի դրամարկղը:

Յեթե պարզի, վոր գյուղի պակասորդի և փչացման մեղքը ընկնի աշխատակիցներից մեկի վրա, հանձնաժողովը պետք է հետեւ, վոր մեղավորից գանձվի պակասորդ գրերի արժեքը, իսկ յեթե յեղել են չարաշահություններ, վորպեսզի գործը հանձնվի դատարան:

59. Հիմնարկներում, բացի մատերիալներից և պաշարից, մեծավ մասամբ պահպում է նաև այլ գույք՝ կահ-կարսի, գործիքներ, մեքենաներ, վորոնք կոչվում են ինվենտար: Այսպիսի բոլոր գույքը պետք է գրված լինի հատուկ ինվենտարային մատյաններում: Անհրաժեշտ է, վորպեսզի արդպիսի մատյաններում գրվի բոլոր նոր ձեռք բերած գույքը: Յեթե նոր ձեռք բերած գույքը չի մտցնվում մատյանների մեջ այդպիսին կարող է անհետ կորչի, ուստի և հանձնաժողովը դայրայի հիմնարկների փաստական ստուգումների ժամանակ պետք է ուշադրություն դարձնի, ճիշտ են տարփում այդ մատյանները, թե վոչ:

Հանձնաժողովը նույնպես պետք է ստուգի, նազդ և բոլոր գույքը, վորպիսին անց և կացրած մատյանում, կամ կազմած է ոպիս:

60. Ռեվիզիոն հանձնաժողով տեղում նույնպես պետք է ստուգի, փաստական ստուգման միջոցով, ինչպես և տարփում շենքերի կառուցվածքները և այլ աշխատանքներ գործկոմի կողմից:

Այդ ժամանակ պետք է ստուգել, բանվորների այն քանակն և աշխատում, այն աշխատանքներն են կատարում, այն աշխավարձն են ստանում, այնքան ժամանակ են աշխատում, ինչպես ցույց ե գրված տարելներում կամ տեղեկագրերում:

61. Ռեվիզիոն հանձնաժողովը նույնպես կարող է փաստական ստուգումների միջոցով հիմնարկներում պարզի՝ քանի հոգի յեն ճաշ ստանում, որինակ՝ մանկատներում և հիվանդանոցներում և վորքան և ցույց տալիս հիմնարկությունը իր հաշվետվության մեջ:

62. Ռեվիզիոն հանձնաժողովը կարող է, փաստական ռեվիզիան անել նաև ուրիշ հիմնարկներում, այն և ժողկրթության, առողջապահության, դատական և այլն:

Այդ ժամանակ ստուգիում է, իրոք գոյություն ունեն այն բոլոր հիմնարկները, վորոնց պահպանման համար բարձելով

գումարներ են բաց թողնվում. տների, շենքերի, սենյակների և գառարանների այն քանակն ե, ինչպես նախատեսնված և բարձրություն:

Այդ ստուգման ժամանակ պետք է քննել ինչպես վերն և առված, նազդ-կա գանաղան գույք, կենդանի և մեղալ ինվենտարը, վորոնք գնված են իր ժամանակին և պետք է մտցրած լինեն մատյանի մեջ կամ կազմած ոպիս:

Հանձնաժողովը նույնպես պետք է հսկի, կմն արդյոք այնպիսի հիմնարկներ, վորոնք քիչ աշխատանք ունեն և չի կարելի արդյոք փակել աղպիսի հիմնարկները, տալով դրանց աշխատանքները մի ուրիշ հիմնարկի, վերը կարող է տանել այդ աշխատանքները:

Նույնպես պարզել ոգտավետ է հիմնարկի պահպանման արժեքը՝ հաշվելով ինչ կարժենա մի մահճակալի պահպանումը հիվանդանոցում, մեկ աշակերտի՝ դպրոցում և այն:

Համեմատելով ստոցած թվերը հիվանդանոցում կամ զըպրոցում, կարելի յե պարզել վորտեղ և թանգ և վորտեղ և հժան ու ստուգել դրա պատճառները: Բացի այդ նման թվական տվյալները նոր տարվա համար բարձր կազմելիս, հնարավորություն կտան պարզելու արդյոք իրական պահճանցների ծախսերն են հաշված բարձելում այդ հիմնարկների պահպանման համար:

63. Փաստական ռեվիզիաները կարելի յե կատարել հիմնարկի վարիչի կամ ստուգիող հիմնարկի լիազորված ներկայացուցչի ներկայությամբ. շինարարական աշխատանքների ստուգմտն դեպքում այն անձի ներկայությամ, վորը դեկաֆարում և այդ աշխատանքները, պահեստների ստուգման ժամանակ պահեստապետի ներկայությամբ: Ցանկալի յե այդ աշխատանքներին մասնակից անել նաև գյուղացիության ներկայացուցիչներին:

ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՐԻ ԱՐՆԵԼ ԲԱՑԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄՄԱՐ

64. Ռեվիզիոն հանձնաժողովը ստուգումների ժամանակ, յեթե կատար անկանոնություններ, սխալներ, զանցառումներ, (սպառաց) նախ և առաջ պետք է պահճանչի բացատրություն հիմնարկի դեկաֆարից, վորտեղ հայտնաբերված են նշած բացերը:

Յեթե հանձնաժողովը պարզի, վոր անկարգությունները տեղի էն ունեցել վոչ թե չարաշահությունից, այլ չկարողանալուց կամ կանոնները չիմանալուց, այդ դեպքում բավական և հայտնել գործկոմի նախագահին, վորակսղի նա միջոցներ ձեռք առնի ուղղելու և նշած բացերը վերացնելու համար:

Յեթե ստուգման ժամանակ պարզի, վոր դպրոցի տնտեսական վասար հասցրված, այդ դեպքում նախագահը պետք և միջոցներ ձեռք առնի մեղավորից վասար բռնագանձելու համար:

65. Յեթե ոեվիզիոն հանձնաժողովը կասկածի տնտեսության համար կատարած վորում ծախսի կամ ձեռնարկման (մերօրորդության) վերաբերակ, այդ դեպքում հարկավոր և հայտնել գործկոմին և համաձայնության գալ նրա հետ՝ գործը ավելի բարեհաջող կերպով տանելու համար:

Յերբ վոր դաշըա-գործկոմը չի համաձայնվի ոեվիզիոն հանձնաժողովի նկատողությունների հետ, այդ դեպքում, յեթե հանձնաժողովը իր կարծիքը գանում և ավելի ճիշտ և հայտնաբերված բացերը վերացնելու համար առաջարկած միջոցները շատ են կարեվոր, պետք և հայտնի ոկրուգալին գործկոմի պրեգիդումին.

66. Ոեվիզիալի լենթարկած հիմնարկների վարիչները ոեվիզիոն հանձնաժողովին պետք և բացատրություն տան մի շարաթվա ընթացքում:

Յեթե նրանք բացատրություն չեն տալիս, հարկավոր և դիմել դաշըա-գործկոմի աջակցության:

67. Յեթե ոեվիզիալի ժամանակ հիմնարկի պետը չի լենթարկում հանձնաժողովի պահանջներին—փաստաթղթեր, հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ և առանուարկի խանգարում և աշխատանքը, այդ դեպքում պետք և դիմել դաշըա և ոկրուգալին գործկոմներին—համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:

68. Յեթե ոեվիզիալի ժամանակ կհայտնաբերվեն խոշոր թերություններ կամ չարաշահություններ հիմնարկների կամ դաշըա-գործկոմի աշխատակիցների գործունելության միջ, հարկավոր և չսպասել ոեվիզիալի վերջենալուն, այլ անմիջապես հայտնել դրա մասին գործկոմին և ոկրուգալին գործկոմի պրեզիզիումին՝ միաժամանակ շարունակելով ոեվիզիալ:

ՈԵՎԻԶԻՈՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՅՐԱՅԻ ԲՅՈՒՋԵ ԿԱԶՄԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐԻՆ

69. Ոեվիզիոն հանձնաժողովին անհրաժեշտ և, վորպեսզի մասնակցի դաշըա-գործկոմի բոլոջին կազմելու աշխատանքներին: Այդ իսկ նպատակով իր կազմից պետք և ընտրի մեկ կամ մի քանի անդամ:

Բյուջեի նախագիծը կազմելիս պետք և հետևել վոր նրա մեջ հաշվի առնվելն դաշըալի բոլոր մուծումները և վորպեսզի ծախսելը հաշվեն հնարավոր խնայողությամբ: Այդ ժամանակ անհրաժեշտ և հետեւ, վորպեսզի անպայման բյուջեի մեջ մըսցընվեն բոլոր ծախսերը և լեկամուտները՝ վորպեսիք նախատեսաբած են տեղտկան ֆինանսների կանոնադրությամբ:

ՈԵՎԻԶԻՈՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

70. Ոեվիզիոն հանձնաժողովը հատուկ ուշադրություն պետք և դարձնի այն հանգամանքի վրա, վորպեսզի իր կատարած աշխատանքների մասին ծանոթացնի դաշըա-գործկոմին և գյուղացիության լայն մասսաներին՝ վորի ընտրովի որդանն և հանդիսանում:

Դրա համար հարկավոր և, վորքան կարելի, հաճախ զեկուցումներ տալ տարբա ընթացքում դաշըա-գործկոմի նիստերում և լայն գյուղացիական ժողովներում: Այդպիսի գեկուցումների ժամանակ պետք և բացատրել ամենազիմավորը և ելականը, թե ի՞նչ և պարզված հանձնաժողովի կողմից, ի՞նչ և առաջարկված դաշըալի տնտեսություններում հայտնաբերված բացերը վերացնելու համար և ի՞նչ և արված այդ ուղղությամբ:

71. Այն հիմնարկներում, վորտեղ ոեվիզիոն հանձնաժողովը տանելու լի իր աշխատանքները, հարկավոր և համաձայնության գալ տեղիումի և տնտեսական հանձնաժողովի հետ: Նրանցից կարող և տեղեկություններ ստանալ, թե ի՞նչ բացեր են նկատում նրանք հիմնարկի աշխատանքների մեջ: Հանձնաժողովը այդ դեպքում քննում և թե ի՞նչումն և գործը և ողնում և իր խորհրդադրությունը, ի՞նչպես կանոնավորել գործը:

Յեթե հանձնաժողովը հիմնարկության ոեվիզիալի ժամանակ կնկատի աշքի ընկնող աննորմալություններ հիմնարկի գործի գրվածքի և տնտեսավարության միջ, նա մանավանդ,

Եթե այդ բացերը վերացնելու համար հարկավոր և հիմնարկի աշխատակիցներին միահամուռ (дружная) աշխատանք տանել, այդ դեպքում ոգտավետ կլինի զեկուցում տալ հիմնարկի աշխատակիցների ընդհանուր ժողովում:

72. Հանձնաժողովը իր աշխատանքների ընթացքում՝ ալելի խոշոր և հաճախ կրկնվող անկարգություններ և սխալներ նըկատելիս հիմնարկի ոեվիզիայի ժամանակ, ավելի ոգտավետ կը լինի դրա մասին հայտնել լրագրին (գազետ): Հարկավոր և միայն նախորդք ստուգել այն նյութը, վորը պիտի լույս տեսնի լըրագրում: Նման նյութերի լույս տեսնելը ոգտավետ կլինի մասնավանդ այն ժամանակ, յերբ այդպիսի թերություններ նկատվում են նաև ուրիշ հիմնարկներում: Ուստի և նրանց ևս կողմնի վերացնել և արմատախիլ անել իրենց հիմնարկի թերությունները: Նույնպես ոգտավետ կլինի լրագրին տեղեկություններ տալ յեթի վորեւ հիմնարկ համառ (упորոհ) կերպով հրաժարվում և պաշտպանել անտեսության շահերը և պահանջվելիք կարգ ու կանոնը, վորպիսի հանգամանքը կստիպի նրան լարել իր բոլոր ուժերը անկարգությունները վերացնելու համար:

